ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1 ☎ /0322/ 4-61-92

թիվ _____
« ___» _____ 2024 թ.

HETQ.am-ի լրագրող
ԱՐՄԵՆ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ
էլ. փոստ՝ armen.ghazaryan2002@gmail.com

Ձեր 03.09.2024թ. էլեկտրոնային հարցմանը.

Հարգելի պարոն Ղազարյան

Ձեզ եմ տրամադրում տեղեկատվություն՝ Ձեր ներկայացրած հարցերին ի պատասխան:

1. Ինչո՞ւ է Տաշիր համայնքի պոլիկլինիկան 2023թ. դեկտեմբերին տեղափոխվել այլ շենք:

«Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն իր մեջ ներառել է հիվանդանոցային և պոլիկլինիկական ծառայությունները, որոնք գործել են տարբեր մասնաշենքերում:

Համաձայն «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի տեղեկատվության՝ որպես Կալինինոյի սովխոզի գրասենյակ 1973թ. շահագործման հանձնված շենքը 1998թ.-ից ծառայում է որպես պոլիկլինիկա՝ կոսմետիկ վերանորոգումից հետո: 2023թ. դեկտեմբերի 23-24-ին կազմակերպվել է պոլիկլինիկայի անձնակազմի տեղափոխումը՝ միատեղելով և առավել արդյունավետ դարձնելով հետագա աշխատանքները: Նաև պետք է նշել նաև, որ պոլիկլինիկական մասնաշենքում արդեն իսկ բավարար չէին ինչպես աշխատանքային /վերանորոգման անհրաժեշտություն, որի համար բավարար միջոցներ չկային/, այնպես էլ բուժսպասարկման պայմանները:

Պոլիկլինիկայի փոխադրումը պայմանավորված է եղել որոշ ծառայությունների մատուցման բացակայությամբ, մասնավորապես՝ բուժառուները դժգոհել են, որ մոտ 1 կմ միմյանցից հեռու գտնվող պոլիկլինիկայի մասնաշենքից՝ հիվանդանոցային մասնաշենք, հաճախ մի քանի անգամ, գնալ-գալու հետ կապված /փաստաթղթային ձևակերպումներ, մասնագիտական խորհրդատվություն, լաբորատոր-գործիքային սարքավորումներով չհագեցած պոլիկլինիկայի ուղեգրումով այդ ծառայությունը հիվանդանոցում ստանալու և դրանց պատասխանները պոլիկլինիկա ներկայացնելով պայմանավորված/:

Իսկ ինչ վերաբերում է տնտեսական գործունեությանը, ապա հաշվարկվել է, որ երկու տարբեր մասնաշենքերի կոմունալ ծախսերը կրճատվել են /մասնավորապես՝ գրեթե 50 տոկոսով կրճատվել է պոլիկլինիկայի կոմունալ ծախսերը/: Կոնկրետ

կատ. Ռ.Պողոսյան
հեռ. /0322/ 2-33-99

թվային արտահայտությամբ՝ 2023թ. առաջին եռամսյակում գազի և էլեկտրաէներգիայի ծախսը կազմել է 814.093 ՀՀ դրամ, իսկ հիվանդանոցային և պոլիկլինիկական ծառայությունները մեկտեղելուց հետո՝ 2024թ. առաջին եռամսյակում ծախսը կազմել է 540.828 ՀՀ դրամ:

2. Ի՞նչ ճակատագիր է ունենալու պոլիկլինիկայի նախկին շենքը:

Տվյալ հարցը քննարկման առարկա կարող է դառնալ «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի նոր համալիրի շահագործումից հետո, երբ պետությանը կհանձնվեն «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հիվանդանոցային և պոլիկլինիկական մասնաշենքերը:

3. Ինչո՞ւ մինչև հիմա պոլիկլինիկայի նախկին շենքը որևէ կերպ չի օգտագործվել:

Քանի որ ներկայումս կառուցվում է և 2025թ. շահագործման կհանձնվի «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի միջազգային չափորոշիչներին համապատասխան շենքային համալիրը, որը հագեցված կլինի ժամանակակից սարք-սարքավորումներով, ապա չօգտագործվող պոլիկլինիկական մասնաշենքում ծախսեր կատարելը ինքնին նպատակահարմար չէ:

4. Քննարկվե՞լ է արդյոք պոլիկլինիկայի նախկին շենքը Արցախից բռնի տեղահանվածներին տրամադրելու հարցը:

Ոչ, չի քննարկվել, քանի որ Տաշիրում Արցախից բռնի տեղահանվածներին «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի պոլիկլիկական մասնաշենքում տեղավորելու անհրաժեշտություն չի առաջացել, ավելին՝ պոլիկլինիկական մասնաշենքը չի ունեցել ընտանիքներին բնակեցնելու համար բավարար կոմունալ-կենցաղային պայմաններ:

Տաշիրի համայնքապետարանը այդ նպատակին ծառայեցրել է համայնքային հանրակացարանային շենքը /Տաշիր, Խանջյան փող. թիվ 3ա/՝ առանց վարձակալական վճարումների, իսկ մեծաթիվ ընտանիքներ նախընտրել են բնակվել վարձակալական հիմունքներով, որի ծախսը հոգացել է պետությունը:

5. Ո՞վ պետք է հետևեր պոլիկլինիկայի նախկին շենքի պահպանությանը:

«Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տարածքում տեղադրված են տեսասարքեր, սակայն պոլիկլինիկական մասնաշենքի տեսասարքերը 28.12.2023թ. փոթորիկից հետո ջարդվել են: Փոթորիկից 10-15 օր հետո վերանորոգվել է պոլիկլինիկական մասնաշենքի տանիքը, սակայն վնասի ծավալների մեծ լինելու պատճառով այլ ներդրումներ չեն եղել: Իսկ ինչ մնում է շենքի պահպանությանը, ապա պոլիկլինիկական մասնաշենքը հսկվել է տնտեսվարի և պահակի կողմից:

«Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հիվանդանոցային մասնաշենքում տարբեր ծառայություններ ծավալելու նպատակով պարբերաբար պոլիկլինիկական մասնաշենքից անհրաժեշտ գույքը փոխադրվել է և օգտագործվել հիվանդանոցում:

Իսկ գողության դեպքեր չեն արձանագրվել:

6. Արդյո՞ք վնասներ կրել է շենքը բարձիթողի մնալու հետևանքով:

ՀՀ Տաշիր համայնքի Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման համայնքային հանձնաժողովի 29.12.2023թ. թիվ 1 արձանագրության մեջ առկա «... հանձնաժողովը

կատ. Ռ.Պողոսյան
հեռ. /0322/ 2-33-99

քննարկեց և արձանագրեց Տաշիր քաղաքում 28.12.2023թ. ժամը 16.00 – 17.00-ն ընկած ժամանակահատվածում ուժեղ քամու պատճառած վնասները, դրանց ծավալները՝ հաշվի առնելով հանձնաժողովի կողմից վնասի մասին նախապես արձանագրված տվյալները և լուսանկարները: Բացի մանր ավերածություններից առանձնապես խոշոր վնաս է հասցվել ...» շարադրանքում տեղ է գտել նաև՝ «12. ՀՀ Լոռու մարզ Տաշիր համայնք, ք. Տաշիր, Գետափնյա փողոց, թիվ 7, Տաշիրի բժշկական կենտրոնի մեծահասակների պոլիկլինիկայի մասնաշենքի տանիք 40քմ /30 քմ * 1.3 քմ/: Գնահատված վնասը՝ 240.000 դրամ» գրառումը: Շարադրվածը փաստում է, որ շենքը վնասվել է տարերային աղետի պատճառով:

Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ
2003720081

2024-09-06 17:31:17 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

կատ. Ռ.Պողոսյան
հեռ. /0322/ 2-33-99